

Վարչության նախագահ՝



Ա Վ Ա Ն Դ Ա Յ Ի Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

/Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդի/

ք. _____ թ.

«Արցախբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/, ի դեմս գործադիր տնօրեն-վարչության նախագահ _____, ով գործում է բանկի կանոնադրության հիման վրա/ ում կողմից տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս _____/, մի կողմից, և քաղաքացի /անձնագիր՝, տրված՝ թվականին կողմից/, /այսուհետ՝ Ավանդատու/, մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

- 1.1. Բանկը ընդունում է Ավանդատուից դրամական միջոցներ /այսուհետ՝ Ավանդ/, և պարտավորվում սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով Ավանդատուին վերադարձնել Ավանդի գումարը և հասանելից տոկոսագումարը:
- 1.2. Ավանդատուն Բանկում ներդնում է ժամկետային ավանդ հետևյալ պայմաններով՝

Արժույթը՝	
Ավանդի գումարը /թվերով և բառերով/	
Տարեկան տոկոսադրույքը	
Ժամկետը /օր/	
Ավանդի ձևակերպման ամսաթիվը	
Ավանդի վերադարձման ամսաթիվը	

1.3. Ավանդատուն իրավունք չունի ավելացնելու կամ նվազեցնելու Ավանդը 1.2 կետում նշված ժամկետում:

1.4. Ավանդատուն հանձնարարում է Բանկին սույն պայմանագրի կնքման օրը, Ավանդի գումարը ամբողջությամբ ելքագրել իր՝ Բանկում սպասարկվող թիվ _____ հաշվից /այսուհետ՝ Բանկային հաշիվ/ և մուտքագրել ավանդային հաշվին: Ավանդի վերադարձման օրը Բանկն Ավանդը փոխանցում է Ավանդատուի Բանկային հաշվին, որի դիմաց հաշվեգրվում է տվյալ պահին Բանկում գործող բանկային հաշվի համար սահմանված տոկոսադրույքը: Ընդ որում, Բանկային հաշվի սպասարկումն՝ Ավանդի մարմանը հաջորդող 31-րդ օրվանից սկսած, իրականացվում է մնացյալ նմանատիպ հաշիվների սկզբունքով՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր պայմանների և սակագների:

Եթե Ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով Պայմանագրով սահմանված չափով տոկոսներ:

2. ՏՈԿՈՍՆԵՐԸ ՀԱՎԵԼԱԳՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1 Բանկը՝ հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուի փոխարեն՝ հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարներից կանտարում է

գանձում:

2.2 Բանկն Ավանդատուին Ավանդի դիմաց տոկոսներ է վճարում սույն պայմանագրով սահմանված չափով:

2.3 Ավանդի գումարի վրա հավելագրված տոկոսները Ավանդատուին վճարվում են՝

Ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա -----ին

Ժամկետի վերջում

2.3.1 Ավանդի գումարի վրա հավելագրված տոկոսները՝ համապատասխան հարկերը նվազեցնելուց հետո փոխանցվում են Ավանդատուի՝ 1.4 կետում նշված Բանկային հաշվին, որից հետո՝

Գումարը թողնվում է Ավանդատուի Բանկային հաշվին,

Փոխանցվում է Ավանդատուի _____ Քարտային հաշվին, ընդ որում Քարտային հաշվին գումարը մուտքագրվում է 2.3 կետով սահմանված ժամկետին հաջորդող առաջին բանկային օրը,

Փոխանցվում է _____ Բանկային հաշվին:

2.4 Ավանդատուին տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով: Արտարժութային Ավանդի դեպքում տոկոսագումարները վճարվում են տվյալ արտարժույթին համարժեք ՀՀ դրամով՝ վճարման պահին Բանկի կողմից համապատասխան արտարժույթի համար հրապարակված առջի փոխարժեքով:

2.5 Ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու օրվան նախորդող օրը:

2.6 Ավանդի համար սույն պայմանագրով սահմանված տոկոսադրույքը պայմանագրի գործողության ժամկետում մնում է անփոփոխ, եթե Ավանդատուն ժամկետից շուտ հետ չի պահանջում Ավանդի գումարը:

2.7 Հաշվարկներում օգտագործվող տարվա օրերի քանակն ընդունվում է 365, իսկ նահանջ տարին՝ 366:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բանկն իրավունք ունի՝

3.1.1. ինքնուրույնաբար օգտագործել Ավանդի գումարը՝ երաշխավորելով Ավանդատուի առաջին իսկ պահանջով Ավանդի ողջ գումարի կամ դրա մասի վերադարձը,

3.1.2. Ավանդատուի պահանջով ժամկետից շուտ Ավանդը կամ դրա մի մասը վերադարձնելու դեպքում լուծել սույն պայմանագիրը և կատարել տոկոսների վերահաշվարկ, Ավանդի դիմաց տոկոսագումարը վճարել վճարման օրվա դրությամբ Բանկում գործող ցպահանջ Ավանդի համար սահմանված տոկոսադրույքով և վերահաշվարկի արդյունքում գոյացած ու ավել վճարված գումարը գանձել Ավանդի գումարից:

3.2. Բանկը պարտավոր է՝

3.2.1. բացել և սպասարկել Ավանդատուի ավանդային և բանկային հաշիվները,

3.2.2. Ավանդատուին տեղեկատվություն տրամադրել ավանդի վերադարձի ապահովման մասին,

3.2.3. ապահովել ավանդային գործառնությունների գաղտնիությունը,

3.2.4. պայմանագրով սահմանված ժամկետում վճարել Ավանդը և հավելագրված տոկոսները,

3.2.5. Ավանդը վերադարձնել Ավանդատուին՝ նրա առաջին իսկ պահանջով՝ սույն պայմանագրի 3.1.2 ենթակետով նախատեսված պայմաններով,

3.2.6. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 30 /երեսուն/ օրյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել Ավանդային հաշվի քաղվածք, եթե տվյալ Ավանդային հաշվին կատարվել է շարժ, ինչպես նաև Ավանդատուի դիմումի հիման վրա 5 /հինգ/ օրյա ժամկետում վերջինիս տրամադրել ավանդային հաշվի լրացուցիչ քաղվածք՝ Բանկի հայտարարված սակագներին համապատասխան:

Սույն կետում նշված տեղեկատվությունը Բանկը Ավանդատուին տրամադրում է .

բանկի տարածքում առձեռն,

էլեկտրոնային եղանակով՝ Ավանդատուի ----- էլեկտրոնային հասցեին,

փոստի միջոցով,

այլ եղանակով՝,այն է՝ -----:

3.2.7 Հաճախորդի ցանկությամբ (պայմաններին և սակագներին համաձայն լինելու դեպքում) Ավանդային հաշվով գործարքների կատարման դեպքում հեռախոսային կարճ հաղորդագրությունների միջոցով (SMS) տեղեկացնել նման գործարքների մասին՝

----- հեռախոսահամարին Չակտիվացնել ծառայությունը

3.2.8. տեղեկացնել Ավանդատուին սույն պայմանագրի պայմանների կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ սույն Պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին ակտերի ցանկացած փոփոխության մասին, որը կհանգեցնի տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխմանը, ինչպես նաև ծառայության ընդհանուր պայմանների և այլ վճարների փոփոխության մասին՝ համապատասխան փոփոխության օրվանից առնվազն 15 /տասնհինգ/ օր առաջ:

Սույն կետում նշված տեղեկատվությունը Բանկը Ավանդատուին տրամադրում է .

- բանկի տարածքում առձեռն,
- էլեկտրոնային եղանակով՝ Ավանդատուի ----- էլեկտրոնային հասցեին,
- փոստի միջոցով,
- այլ եղանակով՝, այն է՝ -----:

3.2.9. Պայմանագրի 3.2.6 և 3.2.8 ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը համարվում է Ավանդատուին տրամադրված այն վերջինիս փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից, անկախ այն հանգամանքից, թե Ավանդատուն փաստացի երբ է ստանում այդ տեղեկատվությունը:

3.3. Ավանդատուն իրավունք ունի՝

3.3.1. Բանկից պահանջել վերադարձնել Ավանդի գումարը և վճարել տոկոսներ՝ սույն պայմանագրով սահմանված չափով և կարգով,

3.3.2. Ժամկետից շուտ հետ ստանալ Ավանդը՝ սույն պայմանագրի 3.1.2 ենթակետով սահմանված կարգով,

3.3.3. սույն պայմանագրով նախատեսված իր իրավունքները պաշտպանելու համար դիմել դատարան, ինչպես նաև «Ֆինանսական համակարգի հաշտարարի» մասին օրենքով նախատեսված դեպքերում՝ ֆինանսական համակարգի հաշտարարին:

3.4. Ավանդատուն պարտավոր է՝

3.4.1. պահպանել ավանդային գործառնությունների վերաբերյալ բանկում գործող որոշումների և ընթացակարգերի պահանջները,

3.4.2. սույն պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխման, անձնագրի կորստի կամ փոփոխության դեպքերում անհապաղ տեղյակ պահել Բանկին,

3.4.3. սույն պայմանագրով սահմանված ժամկետից շուտ Ավանդը պահանջելու դեպքում տեղեկացնել Բանկին այդ մտադրության մասին առնվազն 3/երեք/ օր առաջ,

3.4.4. Ավանդը կամ տոկոսները ստանալիս Բանկ ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և սույն պայմանագրով:

4. ԱՆՎՈՒԹԱՎՈՒՄԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել:

5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և Ավանդի գումարը ավանդային հաշվին մուտքագրելու պահից:

5.2 Ավանդատուն, ստորագրելով սույն պայմանագիրը, հայտարարում և հաստատում է, որ՝

5.2.1 մինչև սույն պայմանագիրը կնքելը ծանոթացել և ստացել է Բանկի կողմից հաստատված Ավանդի տեղեկատվական ամփոփագիրը, համաձայն է վերջինիս բոլոր դրույթներին, ինչպես նաև ծանուցվել ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին և կարգին և դրանց կիրառման հետ կապված առարկություններ չունի,

5.2.2 մինչև սույն պայմանագիրը կնքելը ծանոթացել է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր պայմաններին և սակագներին և չունի առարկություն դրանց հետագա կիրառման հետ կապված,

5.2.3. Ավանդը հանդիսանում է օրինական ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, այն իր սեփականությունն է, երրորդ անձինք Ավանդի նկատմամբ չունեն սեփականության կամ այլ իրավունքներ, այն ազատ է սահմանափակումներից, կալանքի կամ արգելանքի տակ չի գտնվում, գրավի կամ վեճի առարկա չի հանդիսանում:

5.2.4. տեղյակ է, որ արտարժույթով Ավանդ ներդնելու դեպքում ինքն է կրում փոխարժեքի փոփոխումից բխող հնարավոր անբարենպաստ հետևանքները:

5.2.5 Պայմանագրի գործողության ընթացքում Ավանդի վրա բռնագանձում տարածելու դեպքում Բանկն իրավունք ունի կատարել տոկոսների վերահաշվարկ, Ավանդի դիմաց տոկոսագումարը վճարել վճարման օրվա դրությամբ Բանկում գործող ցպահանջ Ավանդի համար սահմանված տոկոսադրույքով և վերահաշվարկի արդյունքում գոյացած ու ավել վճարված գումարը գանձել Ավանդի գումարից:

5.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի գումարի ընդհանուր չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

5.4 Սույն պայմանագրում լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով, որոնք Կողմերի ստորագրման պահից կհամարվեն սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.5 Սույն պայմանագիրը կնքված է 2/երկու/ օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Բ Ա Ն Կ	Ա Վ Ա Ն Դ Ա Տ ՈՒ
Կ. Տ	
	/անձնագրային տվյալներ/ /ստորագրություն/